# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Ազատության հրապարակ 1
Հեռ. (0242)2-24-00, (0242)2-22-37, (044)04-50-50 էլ. հասցե՝ ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 983-Ա**

<<28>> նոյեմբերի 2025 թվական քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0022-0048 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ 0.00812 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով.

**որոշում եմ**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքին Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող(հասցե՝ մարզ Շիրակ համայնք Անի,քաղաք Մարալիկ Հրանտ Շահինյան փողոց 212/3 հողամաս), Անի համայնքի սեփականությունն հանդիսացող 08-003-0022-0048 կադաստրային ծածկագրով հողատարածքից առանձնացված 0.00812 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը՝ փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ այդ հողամասը հասարակական նշանակության շինությունների կառուցման նպատակով օգտագործելու համար:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<28>> նոյեմբերի 2025 թվականի
քաղաք Մարալիկ